

ԿԱՐԵՆ ԱՆՏԱՆՅԱՆ



ՎԵՐՋԻՑ ՀԵՏՈ ՍԿՋԲԻՑ ԱՌԱՋ

Բանաստեղծություններ

ԵՐԵՎԱՆ 2004

ISBN 99941-34-69-8

ԿԱՐԵՆ ԱՆՏԱՇՅԱՆ

**ՎԵՐՋԻՑ ՀԵՏՈՒ,
ՍԿՋԲԻՑ ԱՌԱՋ**
Բանաստեղծություններ

ՀԳՄ Հրատարակչություն
Երևան 2004

ՀՏԴ 891.981-1 Անտաշյան
ԳՄԴ 84Հ7-5
Ա 620

Ա-620

Անտաշյան Կարեն

Վերջից հետո, սկզբից առաջ: Բանաստեղծ./

Կարեն Անտաշյան.

-Եր.: ՀԳՄ հրատ.,-2004

Ա	4702080202	2004թ.	ԳՄԴ 84Հ7-5
	0182(01)2004		

ISBN 99941-34-69-8

© Կարեն Անտաշյան, 2004թ

«ԼՈՒՍԱՐԲՈՒՆՔ»



Արթնացա արշալույսին,
ես՝ անարմատ մի սերմ արևի ու հողի միջև,
և իմ մեջ թրթռաց ապրվել ուզող կյանքը:

Լուսարբունքն օժեց
խափանված տիեզերական անկշռությունը
իմ ցանցառ զգեստների տակ:

Ես այն ամենն եմ՝ ինչ հաջողվեց փրկել
ամբողջության շրջանակից.
մարդկանց տուն հետ դարձած
վերջին երազն եմ ես:



Այս գարունն ունի նորեկ կյանքի բույր՝
Օրը հագել է ապրելու կանաչ.
Կարծես կա հոգուս մեջ կռունկի մի բույն,
Որտեղ ագռավ է բնակվել առաջ:

Օրը դարձել է կաթնա-ծխաբույր՝
Կարծես թե խնկի ծառեր են վառել,
Ախ փակ աչքերիս մի թաքուն համբույր
Ծաղկելու խելառ տենչանք է դառել:



Ես եկել եմ արդեն, գլուխդ դիր ուսիս,
Դու այլևս իմն ես, իմն ես մինչև ավարտ,
Գարնան պես բողբոջիք ցրտահարված հույսիս
Դու իմ պուճուր կռվում հաղթանակի հավատ:

Դու այլևս իմն ես՝ այդ էր կանխորոշված,
Ու իմ միակ ճամփան եղավ ճամփան քո տան,
Ու երգերս հեռու աշխարհներից չված
Իրենց բույնը քո տաք ավերի մեջ գտան:

Ցմահ շունչը իրենց քեզ երգելուն կտան
Կարոտներս հասած աշուններում օտար,
Երբ կթմրեն ջղերը տրորտակված մթան,
Դու երագում ժպտա՝ դու արևը գտար:

Երազախաբություն

Ծովում փշրված լուսնե արահետով
դու կքայլես ոտաբորիկ
ու քո ոտնահետքերի ալիքներից դողը
կհասնի, կդիպչի աչքերիս, որ երկինքն են:

Գիշերն այսօր կմերկացնի մեզ համար
իր այնկողմնային խորհրդավորությունը.
փաթաթվիր երգիս մշուշով,
որ չմրսես:



Տես՝ բոլիս մեջ հիմա ես երկինքն եմ առել
Ու սեղմում եմ որպես հասած մի նուռ,
Արբունքահաս լուսինն իր լապտերը վառել
Լող է տալիս նա մերկ իմ երկնքում մի բուռ:



Քո աչքերն ունեն գիշերվա գույն
Եվ կիսատ լուսին - թաքուն մի փայլ,
Ես քեզ հորինել եմ մշուշաթույր,
Որպես էն աշխարհից ինձ կանչող ձայն:



Սեթևեթ ճոճվող ծուփն այս սպիտակ
Քո հորինումի ուրվագիծն ունի.
Կույր թռչունի պես լռել սրտիս տակ՝
Կարծես անունդ ուրիշ տուն չունի:



Մայր մտնելիս արևը քնքուշ գգվեց ամպին.
Շիկնած ամպը ուներ երազի դիմագիծ...
Աչքս մնաց, սեր իմ, վերադարձիդ ճամփին,
Ժամանակս մթնեց հետհաշվարկից:

Իմ քաղաքը

Երբ խոսվում եմ ես էս աշխարհից ցնդած,
Մենությունս դանդաղ փողոց է տանում ինձ՝
Ուր ննջում է մթնում մայթեզրերին դեռ թաց
Նոր անձրևով հղի մի հին թախիծ:

Մենք հանգում ենք իրար՝ ես ու լռությունդ,
Իմ պուճուր քաղաք՝ գավառական սեր իմ,
Քո անձրևաբույր, էդ լուսնաթաթախ գոյությունը
Պոետական թևեր է հյուսել իմ ուսերին:

Երգերս գտել եմ քո մոտ ծակուծուկից՝
Դու իմ ծովն ես, ես՝ քո մարգարտաորսը,
Օվկիանոսում կխեղդվեմ ես սիրո անձուկից.
Քեզնից արև պեղելն է իմ բուն գործը:



Էս գարունով հղի քամին տունս խուժեր,
իր տաք շնչով հյութեր անձկությունը համակ,
առագաստներ սարքեր կախա-հանված
վարագույրս ճերմակ...

Տունս պոկվեր տեղից ու, այ քեզ բան... լողա՛ր,
ու գնայինք էդպես՝ ես ու քամած քամին,
գարուն խմած քամին,
մեկ է, թե ուր...

Մեկ է, ուր էլ հասներ տունս առագաստով՝
դա կլիներ միակ հնարավոր ճիշտը
ու կլիներ միակ տեղն այն երանելի,
ուր ինձ կասեին.
- Եկա՛ր... էլ չուանա՛ս:



Եթե դեռ քնքուշ են իմ երգերը՝
Ուրեմն դեռ դառն է աշխարհում,
Թեպետ հա ջնջում է հետքերս
Ժամանակ փոխ տվող վաշխառուն:

Ու քանի դեռ ժամանակն է մեր տերը՝
Ուրեմն դեռ գոյ ենք համարվում,
Բայց ո՞վ է էդ ծպտյալ տիրոջ մերը,
Էս ու՞ր են մեզ անվերջ գլորում:

Ու քանի թեժանում է կռիվը.
«Սա վերջին անգամն է», ասում ենք,
Բայց թե մինչ պտտվում է անիվը,
Բոլոր վերելքներն էլ անկում են:

Եթե դեռ ընկնում է կյանքի գինը,
Ուրեմն դեռ մահն է մեր փարան,
Եթե միշտ մարմին է մեր հագինը,
Երգերս տարեք կառափնարան:

Տողերում, թե ցավում են մտքերս՝
Դեռ էլի պոետ եմ իբր թե,
Ու եթե քնքուշ են դեռ երգերս՝
Ուրեմն Աստծուց եմ էդ կթել:

Շունչ

Ես ծեր եմ երկրային արշալույսների չափ
ու չմեռնելու համար ինձ հարկավոր են
անապատները, լեռները, ծովերը և...
քո ժպիտը:

Ես նորածին եմ ծիլ տված հասկի պես
և ապրելու համար ինձ անհրաժեշտ են
արևը, անձրևը, հողը, քամին և...
քո ժպիտը:

Ես անցողիկ եմ արարչական ներշնչանքի պես
և երգ դառնալու համար, ինձ պետք են
ընդվզում, տառապանք, երկունք և...
քո ժպիտը:

Ես նախաստեղծ եմ, ինքնաբուխ, էարար՝ լույսի պես
և շնչավոր մարմնանալու համար
ինձ հարկավոր են խոսքեր, աստվածներ, իմաստներ և...
քո ժպիտը:



Ու ես կգամ՝ լցվելով քո սրտի բոլոր հնահունները:
Ես՝ անապատում ապրող մարգարտի որսորդս,
կգամ՝ հորինելու քեզ համար անափ օվկիանոսներ
արշալույսի ծիրանով լեցուն անմահությամբ:

Քեզ կբերեն արևով օծուն հակինթներ
ու աստեղային ադամանդներ՝
ջրվեժածոր հյուսերդ հարդարելու համար:

Այդ օրը աշխարհին ծովացած անմտությունից վեր
քնած կլինի քեզ մոռացած բարեգութ աստվածը,
ես հաղթական կմտնեմ նրա տիրույթները
ու քեզ ընծա դիցերիս զուռնադիողը կբերեմ:

Կգամ՝ տրորելով վաղուց խոտածածկ քո ճամփաները,
և դու, անհորիզոն տառապանք իմ, կիմանաս,
որ քո լինելու պես անհեթեթաբար
ախր կարող էիր և չլինել,
բայց... կաս:



Վայր ընկած դեռևս տրոփող սիրտ - ավստսանք,
է ամբողջության բազմերանգ թերմացք - հոգիս,
Մարդագույն կավից հավերժաբույր ժպիտ - պատրանք,
Ու սև աստղային ծակեր կան դեռ մտքիս:

Մահվան կանխակալ գետանցքներ – կնճիռ,
Դեռ չեկած գարունն ավետող զանգեր – սիրտ,
Լրացրու անկատար հորինումս – հնչի՛ր,
Ու սիրով տաշտշիր այս աշխարհը բիրտ:

Ջրիկ արժեքների առուծախ - օր,
Ես թրջեցի ոտքերս մի թեթև - շփում,
Եվ արևից ոչինչ գողացած ոչինչ - փոր,
Շուրթերս մոտեցնում է Աստծուն և ըմպում:

Ես կփրկեմ ձնծաղիկը վերջին – ընդվզում,
Եվ արդարացում կգտնեմ մահվանը – ճիգ,
Կգտնեմ ինքնաբուխ սիրո աղբյուրներ – երազում:
Ճոճանակ կսարքեմ կախաղանները պիրկ:

«ԹԻԹԵՌՆԱԿԻ ԵՐԱՋԱՀԱՆ»



Ցախ-ցանցառ ճյուղերս դառնում են թևեր.
տարօրինակ բան՝ պարզվում է ես թռչուն եմ,
արմատներս կտրվում են ու դառնում ոտքեր,
բայց դե թևեր ունեմ, ոտքերն ինչի՞ս են պետք:

Այն ամենն, ինչ
երբևէ հրապուրել ու զարմացրել էր ինձ,
այժմ ծիծաղելի է թվում այնպես.
փառահեղ գյուտ՝ ես սովորել եմ ծիծաղել:

Կվերաթաղեմ այն ամենն, ինչ երբևէ փորել էի,
ահեկան ողբով ու ջահել ցնծությամբ,
կվազեմ, կթռչեմ ու կգնամ
փորձարկելու նոր փեշակս
ամեն պատահածի
վրա, հանդեպ ու նկատմամբ:



Ես բառեր գիտեմ գոհարազարդ, սիրուն,
Որ կարող են երգել իմ չապրածը անգամ.
Շուրթերի պես բուսնել ուրիշների սիրուն,
Եվ աշխարհը փրկել քսան հազար անգամ:

Ես անուններ ունեմ սրտի թրթռումներին
Ու կխոսեմ անգամ մեռելների տեսքով,
Կկործանեմ անգամ, թող ինձ ներվի՝
Խոսքով, խոսքով, խոսքով:

Ձայնագրում եմ ես նրանց համա՞ր գուցե,
Ում աչքերի մուժում գորշ պարանն է ճոճվում,
Նրանց անբառ ողբից, որ խոսքերս հունցեմ
Ու ստանամ վերքին շուրթ տվողի կոչում:

Միգուցե և նրանց, որ գույնզգույն հյուսել -
Թևել գիտեն գարնան ծաղկեծաղիկ խաղով,
Բայց չգիտեն երգի նման հոսել, խոսել,
Բայց չգիտեն երգել, հերքել, վերքել տաղով:



Լսի՛ր, ո՞նց ես էդպես ցեխոտ կոշիկներով
Դանդաղ ճեմում սիրո ճերմակավոր ավիին,
Ու հարցը լուծվեց հա՛, էդ կեղծ քո շիկնելով,
Որ հա աղ ես ցանում իմ օրերի լափին:

Հ՛ը, գրիչ իմ, գրիչ, հա թուղթ ես մրոտում,
Թանաքե հետքերով չափսփում ես ճերմակը.
Ես գիտեմ, ա՛յ ցանցառ, այդպես ես կարոտում,
Այդպես ես սեր սարքում մրահունց թանաքդ:



Գիշերվա քնատ հոնքերով
տուն կդառնան հարբած մարդիկ՝
իրենց հետ տանելով ջրիկ պոռշտիներ
ու անբացատրելի տխրությամբ լի
անկշռություն:

Ծամծամված սեղաններին վերջապես
հետմահու խաղաղություն կիջնի:

Մարած կլինեն բոլոր ծխախոտները,
ու հացի մնացորդները մինչ առավոտ
կավանդեն կրծմրծած իրենց հոգին:

Հռիռի ու բամբասանքի փշրանքները
հատակի ճեղքերով կթափվեն նկուղ՝
անաղմուկ հանգչելով քնած առնետների մորթին:

Եվ հոգնած աթոռները կփորձեն ուղղել
իրենց սապատները քամակադրոշմ:

Գիշերվա քնատ հոնքերով
տուն կդառնան հարբած մարդիկ՝
երգելով դեղին երգեր այն ամենի մասին,
ինչ տարել է իր հետ խմված ժամանակը
և չի բերելու ետ:

Չար հեքիաթ

Արնախում լվերը պսպեղ-աստեղակերպ,
հեծել են գիշեր-եզը սևամազ
և խմում են երազ
ախոռում փնթփնթի տիեզերքի:

Ներքևում՝ անշուք շենքերի լուսամուտ-աչքերն են չովում,
որ վարագույրե կոպերի տակից
մշուշում որսան ամեն լուսե ճեղք:

Բոլոր շքամուտքերում վախից դողում են
բորբոսնած ու տձև ստվերները՝
խնդրելով, որ իրենց գթան շուն որսացող մարդիկ:

Կուտ-կուտ-կուտակվում է աղբե հովիտներին
աղբե քաղաքների աղբե տանիքն ու
ամպե թաշկինակով քիթը փակում է
քաղքենի տիկինը՝ լուսինը:

Ամեն ոտնաձայնի ականջալուր են
դռներն ամուր կողպված, որ հանկարծ
տուն դարձող ոչ մի չաստված
չտեսնի թռչումը տկլոր աստղիկների:

Մահամերձ նժույգի նման ծեր՝
մոնչում, փնչացնում է քամին:

Տներին ու սպանված շների դիերին
ծածկում է վառարանային թունածուխն ու...
մշուշն առանց լուսածին հենարանի
վեր է ածում մեռած ձևացող գիշերն իմ
հսկա դիահերձարանի:

Լացկան ուրվականների քաղաքը

Հնամած շենքերը մթան մեջ հորանջում,
Իր կենտ աչքն է ճմլում գիշերը քնատ,
Հեռվում ինչ-որ փարթամ դրախտ է կանաչում,
Իսկ էստեղ մեր կյանքն է կիսատ-պռատ:

Սովերներ են հիմա ճամփաներում միայն,
Իսկ մարդիկ ցնդել են մարմինների տակից
Ու երկվության թևին՝ աշխարհներում մեկ այլ,
Վերածնվել ճերմակ՝ ցեխակուլով կյանքից:

Իսեղճ քաղաքը գիտի մուփն այս վերացումի
Ու չի կառչում ոչ մի հեռացողի փեշից,
Իսկ թե հնչում էլ են ախեր հեռացումի՝
Ապա միայն ցանցառ անձրևների միջից:

Անձրևը հոխորտում է տուֆ շենքերին անշուք՝
Խաբկանքի տակ ծպտյալ լացը բեմադրելով,
Փողոցներում հազար չվերծանված շշուկ
Ականջներ են փնտրում՝ իրար հրմշտելով:

Գիշերն արդեն քնել է կենտ աչքը կիսաբաց,
Որ ոչ ոք չմոլորվի վերադարձի ճամփին,
Սպասումին թիկնել է խոնավ մի այգաբաց,
Բայց ինչ-որ ուշանում են ուրվականներն անթիվ:

Իմ սուտն ու քո մուտը

Թե փորձեմ հոգիդ փորփրել գրչակոթով,
այնտեղ ոսկորով լի փոքրիկ վանդակներ կգտնեմ,
բայց թե չեմ ուզում դեպի քեզ տանող
ճամփաներ հորինել,
ճամփաներն իրենք գլխի կընկնեն՝
ինչպես կապել իմ սուտը քո ստին,
իմ թքած ունեմը՝ քո հահա-հիհիին
և այլն...

Բայց արի ու տես,
լույսի մատները բարակ են այնքան,
որ չեն կարող ծառին սեղմած պահել
անգամ մի գահավեժ դեղին տերև...
Օրվա մի էջը պատռած է այնպես,
կարծես նրանով հապշտապ մաքրել են
մեկի յուղոտ մոռվոթը,
ու եթե նույնիսկ քաղցած մի շուն ոսկոր է գտել՝
դրանից այս պահն ավելի երջանիկ չի համարվի:

Ախ քեզ համար աշխարհում ամեն ինչ վանդակավոր է,
երբ դու երագում ես փիղ վարժեցնելու մասին:
Այդ պահին դու ամենից շատ սիրում ես քեզ,
և դրանով իսկ ակնարկում, որ արժանի ես
մի քիչ սիրմրտվելու:



Ես ուրիշի երազից էի,
Դու՝ ուրիշի երազածը,
Երբ իրար հետ հանդիպեցին
Քո գալիքն ու իմ անցածը:

Ու հյուսեցինք այդպես կարոտն
Անգո, չեղած մեր փնտրածի՝
Անհաս այնչափ ու այնչափ մոտ
Քո հերքումը իմ կասկածին:

Ի՞նչ տվեցի, ի՞նչ տարա ես,
Դու ունեցա՞ր քո ուզածը.
Սխալ էր այդ ու ճիշտ կարծես,
Որ կորցրինք չփնտրածը:

Ես ուրիշի երազից էի,
Դու՝ ուրիշի երազածը,
Ու իրարից բաժանվեցին
Իմ տալիքն ու քո չուզածը:

Արարում

Շուռ եկավ ավազե ժամացույցը,
Ես կարծես կախվեցի գլխիվայր,
Ալիքվեց գաղտնիքի մութ մատուցը,
Եվ ճաքեց ծովի մեջ մի ձեր ժայռ:

Ճեղքից գալարվեց քնքշությունը,
Ժայռի լռած սիրտը բախեց,
Ծովի մեջ քրտնեց լուսությունը,
Գալարվեց փոթորիկը վախից:

Ուր որ է կայաթի սիրուց սիրտն իմ.
Ուր որ է կժայթքի հրաբուխ,
Եվ այրվող ներշնչանքը կրկին
Կերկնի օձագալար ծուխ:

Աշխարհ կհորդի հրահեղուկ սերս՝
Խելառ փարվելով անափ ծովին.
Հրայր կլցվի նրանից ներս
Չանսալով մահացու ցավին:

Նրանց համբույրը քար կդառնա,
Քարը կդառնա հրին նոր մաշկ,
Լավան քարանալով կմարմնանա՝
Դառնալով անձիր ծովի հետ հաշտ:

Սուրբ ծննդյան անցուդարձ

Տրորվելով ու կոխկրտվելով ձնհալի ու երեկոյի միջև՝
ճերմակ երջանկությունը քաղաքի կրունկների տակ՝
կտարածվի բոլոր փողոցներում ու փակուղիներում,
կիջնի մինչև նկուղները և անգամ կհասնի ձեղնահարկ:

Ես միամիտ համառությամբ՝ կշարունակեմ գործել երգերս
կարմիր, դեղին ու կապույտ ծիածաններով,
թե չէ ամեն մարդ չէ, որ տեսնում է լռության ճերմակը,
այն էլ՝ ապրվելուց հետո:



Դու էլ չես գա.

Կմտնեմ հին խուցս, որ հիշում է դեռ ինձ
ու կխմեմ առավոտիս մշուշ-ներկան:

Կազատեմ երգերս հավերժության բեռից
կշինեմ թիթեռներ՝ միօրեկան:

Երբ մենակ մնաս պարապ աշխարհի
համայնավար աղմուկներում,
ինձ հիշիր, ինձ նվագիր, ինձ երգիր, ժպտա...

Հնամաշ փեշերով հուշագրությունը
տարած ու չտարած կռիվներիս
հաշիվներն է համրում.
հանրագումարը գրո է:

Հաճելիորեն

ազատ են պատերս ճաղերի միջև.
իրիկնահացին էլի մենակ եմ լինելու.
գծավոր ճերմակ կիագնեմ այդ առթիվ:



Ես հիշում եմ փողոցը լացկան ուռիների.
Ուր գիշերվա մթնում իրար սպասում ենք դեռ,
Խառնաշփոթ երամն ագռավների
Պաշարել էր կրկին լուսինը կեռ:

Ես հիշում եմ բառերն ու մեղեդին մաշված
Հին օրերի հեռվում մեր շվշվացնող քամու:
Գուցե իրոք եղել էր, կամ էլ գուցե թվաց,
Թե անձրևից թրջված իմ տուն էիր գալու:

- Ոսկե ձվի պես լուսինը ճաքեց.
Կեղևը տարավ թաքուն մի այլակ,
Ձուկը լճակից աստղ ճաշակեց՝
Իր իսկ հորինած ստից անտեղյակ:

- Ես կախարդ եմ ու մոգ -
Տեղական արարիչ,
Որ ամեն ամեն օր
Արարում է մի նոր - տիեզերք...

- Որքան անհեթեթ են թվում խեցգետինները,
որ ծվատում են իրար կաթսայի մեջ.
Բայց չէ՞ որ շուտով կրակը կվառեն
և վերջ:

- Կարկատված ճամփեքիս շպարված այտերին
Ցավացող կարմիրից արցունքներ են դողում,
Բայց անունս հնազանդ իր խեղկատակի դերին
Հա խնդում է ձևած ամեն երգիս տողում:

Անմնացորդ

Այսօր ոչ մի ժպիտ չծնվեց փողոցում.
անձրևից առաջ տոթ էր,
անձրևից հետո՝ ուշ:
Ոչ մի մարդակերպ չհասավ հորիզոնին.
գիշերվա անցորդը գող էր,
ցերեկվա անցորդը՝ գիժ:

Ոչ մի ականջ այսօր չորսաց ձայնը ծանոթ.
լսեց՝ չհավատաց,
լսեց ու վազն անցավ:

Ոչ մի երազ այսօր չմեկնվեց.
չէին տեսել երազ,
կամ չէին ուզում օրը մտապահել:

Եվ այդպես էլ օրը անտունի պես
հա դռնեդուռ զարկվեց ու մնաց փողոցներում՝
արև-անձրևի տակ:

Չծնվեց ոչ ոք այդ անցողիկ օրը:

«ԳԻՐՔ ԱՀԵԿԱՆ»



Այստեղ գիշերները մեռնում է արևը
և հողը բոլորին չի հերիքում:

Այն, ինչ լույս է՝ կյանք չէ դեռ,
այն, ինչ հող է միայն՝ կյանք չէ էլի.

ես հողի ու արևի անմիտ կռիվն եմ դեռ
ու քամում եմ կարմիր ավազը տառապանքի:



Նա, ով կորցնելու ոչինչ չունի՝
Նա գտնելու էլ չունի ոչինչ,
Երբ կտրում են թևերը թռչունի,
Սկսում է ասել երկինքը ջինջ:

Կյանքս, սպառվող մի քիչ-մի քիչ,
Կմարի սրտում անթթվածին.
Մթան մեջ կայծոռիկ իմ լույս գրիչ՝
Դու ես անուն տալիս իմ ապրածին:

Բայց ամեն անուն նաև մի բեռ է
Ցմահ այն կրողի փոխոր ուսերին.
Չնայած, որ մարդը նաև լեռ է,
Նաև դամբարան հին հույսերի:



Ոչինչ չարժեն հիմա իմ երգերը գոռոզ
Ու իմ երգած վեհի հուզումները լուսե,
Ես դարձել եմ հիմա մի ներվային գոռոզ
Ու այն վերջին ճիգ է, որ ինձ լսեն...

Ես՝ տապալված կայսրի մեռած երագ,
Ումից լկտիաբար իր մենությունն են «քցել»,
Այն աստղային ծակերը, որ կային վրաս,
Շոայլ օրը վաղուց է մանրադրամով խցել:



Գիշերն ավելի է երկարել, քան կարճացել է օրը -
Ինչ-որ մի բան ճիշտ չէ՝ ես գլխի եմ ընկնում,
Ծառը զգույշ հանում է իր խունացած շորը
Եվ ապակու աչքից արցունքներ են ընկնում:

Աղավնու թևերը մշուշը ճեղքեցին
Ու մեկի սրտին կես-հավելով անցան,
Ծառը մեջքին զգաց մի պողպատե կացին
Ու հողը մորմոքեց անբնական մի ցավ:

Անդունդը չափելու համար սիրտս նետեցին ցած.
Անկումի պահը թվաց հավերժ...
Օրը, ծառն ու ես մեզանից ջնջված՝
Այդ անկյալ թափի մեջ գտանք մեր վերջը:

Հիմա պետք է լցնել այդ ամենաէ բացը,
Որ մեր մեջ ու մեր շուրջը փնտրում է ապաստան.
Պատասխան չկա... ոչ էլ հնչել է հարցը.
Ես գլխի եմ ընկնում մի՛ բան ճիշտ չէ հաստատ:

Առօրեականություն

Պետք է դիմանալ միայն մինչև հաջորդ օրը,
ժամանակը շարանն է հենց կիսատ գործերի.
Ախ անաղ է ու սուտ իմ առօրեական անդորրը,
Որտե՞ղ հեքիաթներիս հրաշքը կորցրի:

Մեկ-մեկ ուզում եմ ես քնով ընկնել՝ մնալ
Եվ ուշանալ այս անվերջ կրկնվող սկզբից,
Կամ պարտքով փող վերցնել ու գնալ,
Անվերադարձ մեկնել այս թմբիրից:

Ինչպիսի հանճար է ծնել այս մեծ սուտը.
Ինչու՞ պիտի կավը կարողանա ցավել,
Ինչպես հաղթեմ ճնշող ընթացիկն ու բուֆը
Ինչպես ջարդեմ նեղվածք այս կլեպս կավե:

Ախր ես ծնվել եմ հարբած ու գիժ երգից,
Որպեսզի քանդակեմ հոգիները բռի,
Պատմեմ երազիս այն ոսկեհմա երկրից
Որ կծնվի սիրո մեկ - մեկ ու կես բռից:

Ինձ խեղդում է մի խեղճ ու գորշ ինքնորոշում,
Ես զգում եմ աշխարհից թթվածնի պակասելը,
Անհամ երջանկության ցանցառ այս մշուշում,
Որ անվերջ թաքցնում է իմ ինձ հակասելը:



Գիշերն այնպես թաքուն, գողեգող է գալիս,
Ինչպես մարաղ մտած սևամորթ կատուն,
Կանխազգում եմ, որ մի բան է տանելու,
Բայց չգիտեմ բնավ, թե ինչ կամ ում:

Սպասման այդ լուռ, տագնապալից մթից
Խուճապահար՝ վախի գորշ մկներ են փախչում.
Դուրս՝ ներսիս խճկոնք ամեն ծակուծուկից՝
Ուրիշ ապաստարան որոնելու:

Մահվան կանխազգումը դառնում է սրթսրթան՝
Ինչպես սառած ճամփին անշտապ ոտնաձայներ...

Տեսնես մթան տարածը առավուրդ գտա՞ն,
Թե՞ էդ տարածն արդեն մոռացումի փայն էր:



Լցրե՛ք տղերք, լցրե՛ք, պարպենք գավն էլ վերջին,
Թե գալու է վերջը՝ թող մեզ գտնի հարբած,
Երգենք, թեկուզ խռպոտ, բայց թող հնչի
Արևարոտ մի երգ մեր բարձրյալին ամպած:

Թե մենք մեզ չտվինք կյանքի էս շուկայում,
Մեզ առնող էլ չի լինելու՝ ու՛մ ենք պետք,
Բայց թե դեռ կանք. այդ մասին է վկայում
Մեզ տուն տանող-չտանող մի ութածև ոտնահետք:

Թքած, տղերք, լցրե՛ք, խմենք ումպն էլ վերջին,
Թե գալու է վերջը՝ թող մեզ գտնի հարբած,
Մեկը բան էր ասում գիշերը ականջիս,
Աղմուկից արթնացա, ախ, խոսքը կիսատ մնաց...



Տուրտ է հիմա ու մութ իմ հուշերի հեռվում.
Ախ կթռչնի կարոտս, որ գարուն է հագել,
Մի մոլորված թռչուն է մշուշի մեջ նվվում.
Ո՛վ բան ու գործ թողած՝ կուզի սրան փրկել:

Չէ, աղջիկս, սուտ է, մեր սերն անտեր մնաց,
Մոռացումի քողով փակիր լուսամուտդ.
Ով իր կորուստները որոնելու գնաց՝
Իրեն էլ կուլ տվեց անհնարի մութը:

Մեր սիրուց մնացել է չգրված մի տող,
Համարձակությունս չի հերիքում, որ այն գրեմ,
Մնացել է աղոտ աստեղային մի դող՝
Մոռացումի անհուն դատարկության դեմ:

Մեր սիրուց մնացել է գինու դատարկ մի գավ
Ու կիսարբած, կեսլուրջ մի անորոշ զգացում,
Մեր փայփայած լույսը խավարի մեջ հանգավ,
Անցյալ ժամանակից մոխրահոտ է զգացվում:

Մեր սիրուց մնացել է մի լքված կայարան,
Գնացքները վաղուց կանգ չեն առնում այնտեղ,
Մեր վերջին աշունը թռչունները տարան,
Ու չմնաց ձմռան դեմ ոչ մի հուտ կանթեղ:



Գիշերը կտևի մինչ լուսաբաց.
Քո հուշով են չափվում գիշերն էլ, օրն էլ ,
Ես նորից անտերունչ եմ, հարբած,
Ինձ նորից մենությանն է օրհնել:

Իմ և գիշերվա միջև լուսամուտն է,
Գիշերվա և քո միջև՝ ոչինչ,
Իսկ ոչինչը մեզ բաժանող մութն է,
Որ արցունքաբույր է մի քիչ:

Սև մթին հուսախառն է երազը.
Ինչպե՞ս համակերպվեմ չեղյալությանը քո.
Գիշերը հարատև, այգաբացն անհաս է,
Ու ինչ ասես չի անցնում մարդու մտքով:

Աչքերս քո հաբույրոտ են դեռ.
Ախր ես ինչպե՞ս մենակ մնամ,
Առանց քեզ անարև, ցուրտ ձմեռ
Եվ լինել պարզապես չլինելու նման:

Ցավագրկում

Հա՛, ես քոնն եմ այնքան, ինչքան դու ես իմը.
Համբուրիր ինձ, ցավ իմ, ես ու դու ենք հիմա:
Դու ես փակվելու արդեն իմ ապրածի գինը -
Այ թե խելոքն էի ես, կամ էլ դու էիր հիմար:

Ես սիրում եմ... հետո՞... է, ամեն ինչ ստվեց.
Էլ ոչ մի բառ չունեմ «սիրում եմ»-ից հետո:
Գրիչս ձմեռվա սուրբ փեշերով սրբվեց
Ու ցած հոսեց կեղտոտ առօրյայի գետով:

Տեսնես ի՞նձ ով սիրեց իմ ծնվելուց առաջ -
Չէ, էդ սուտ է հաստատ՝ սիրո ծնունդ չէ մարդը...
Մեծատառով ճիշ... ու երեք կետ-հառաչ...
Իսկ դրանից հետո ճանապարհը հարթ է:

Ես էլ քոնն եմ այնքան, ինչքան դու ես իմը.
Ներշնչիր ինձ, ցավ իմ, ես ու դու ենք հիմա:
Ախր քանի ես կամ՝ շատ է բարձր գինդ,
Բայց դու սրբագործվիր... ու ես էլ դեռ կգամ:

Խեղկատակի թաքունը

Նորից մարեցին լույսերը,
Խառնամբոխը ցրվեց դահլիճից:
Ծափերի մեջ խեղդելով իմ ստվերը՝
Բազմությունն իր հետ տարավ ինձ:

Ես մնացի դատարկ
Ու ժանգոտ իմ պատերի մեջ.
Կիսարբած կեցության վանդակ,
Վանդակված գոյության մարդամեջ:

Անհաղորդ նկարած ժպիտին՝
Մոռացումն ինձ ջրեց արաղով,
Զկոտած իմ հետոն ու պիտին
Նա մտքիցս հանեց կատակով:



Այս գարունն իմ կարոտն էր ուշացած,
Մենության հոգեվարք՝ հալոցքը ձյան.
Ո՞նց բախտի հեզնանքից զգուշացած՝
Երազս մատնեցի գոյության:



Պահ առ պահ վառվող օրերը
Խավարի անհունին լուսե բիծ
Մենք կանցնենք՝ կհետևեն նորերը,
Որ նույն փոսը փորեն սկզբից:



Այս օրը պիտի ապրես երեկվանը հատուցելու համար,
Իսկ վաղը արդեն նոր պատճառ կլինի,
Մեկ է, հիմա ծմեռ է, հետո՝ էլի ամառ.
Խմի՛ր քո բաժին սպասումն ու թող անուշ լինի:

Էջանիշ երկտողեր



Ծովի պես ամեն առավոտ
երգերս կույս են արթնանում:



Մոտիկ կորցրի, հեռվում չգտա
ու մնացի էդպես թալանված կես ճամփին:



Քչերի մեջ քչերին են փնտրում,
շատերի մեջ՝ Մեկին:



Մերկությունը սիրո համազգեստ է՞, տարա՞գ,
թե՞ մի ձև է արդյոք թաքնվելու:



Վերջը ուշանում է, դեռ կանք ուրեմն
ու դեռ վերապրում ենք ինքներս մեզ:



Աստղեր ծնելու համար Դու հոգիս ես հերկել.
տեղ չի անի արտո՞յ իմ կավեղեն չափում:

«ՁՄԵՌՆԱՄՈՒԹ»



Արևն ընկնում է ամեն տերևի հետ.
 ցեխոտում է դեմքը
 ու մնում է այդպես մինչև գիշեր...
 Ես լսում եմ մեռնող մայթեզրերի հեքը,
 որ չգիտես, թե ում քայլատրուփն են հիշել:

Դո՞ւ ես...

Դու չես անցել այս փողոցով,
 արյանս մեջ լուծված կապույտ ցնորք ես դու,
 ես մոլորված մի ճայ եմ ու դու անափ մի ծով:

Ինչ-որ մի ձեռք սահում է իմ մշուշոտ դեմքին՝
 հալվելով մաշկիս փաթիլի պես,
 երբ բացում եմ աչքերս, ուրիշ դեմքով մի կին
 ճակատիս գրում է քո համբույրը ու քեզ.

Դո՞ւ ես...

Դու չես հալվել իմ մատների վրա
 ու չունես գեթ մեկ ժայռաբեկոր,
 որին պիտի փարվեին իմ հոգնաբեկ թևերը:
 Ծառուղին մերկանում է հոգեառ քամու առաջ.
 դառնում է հարեմ, ու քամին դրանից ավելի է սառչում:
 Ես քեզ ինչպե՞ս այս անդունդից հրեմ,
 երբ արյանս միջով ես ինձնից փախչում:



Եվ այսպես, ամեն ինչ ավարտվեց.
դու չկայիր ու չկաս
և այդ երկու չկաների միջև
հարցական է դնում հիշողության կորուստը,
ու ապրված մի կյանք
տուն է վերադառնում ավազների միջով՝
հետևից ջնջելով ոտնահետքերը:

Եվ ինչու՞ ամեն ինչ ավարտվեց.
ես չկայի ու չկամ
և իմ ու այդ չկաների միջև
ինչ-որ մեկը լարում է իր կանգնած ժամացույցն ու
իրար կարկատելով անվերնագիր մտքերը՝
դանդաղ հեռանում ոչ մի տեղը իր...

Եվ իրոք ամեն ինչ ավարտվեց:

Ջուլոյապատում

(Ա.Ջ.-ին)

Առագաստը ճերմակ իր ականջն է լարել
Ու լսում է ծովի հեքիաթը հին,
Թե ինչպես է մի օր ձուկը թռչունացել՝
Դեմ տալով իր տեսիլքը Նրա բնաբանին:

Դու բացել ես հիմա թևերդ երազապաշտ
Ու չես կարող թռչել լիրբ ցեխերից անդին,
Աշխա՞րհն էր վայրենի, թե դու անհաշտ
Քֆուրոտել նրա լավ ու վատին:

Աշխարհն էր խելագար, թե՞ դու նրա բկում
Վերջին թռչնաձկան լողակի փուշ,
Քո ճիչով է նա դեռ իր թոքերը փքում,
Բայց դու էլ կդառնաս մարսված վերիուշ:

Վերջին ակնթարթում անհրաժեշտ է լռել
Միայն Այնտեղ ամոքում կա քո մեծ ցավին
Մերկ լուսինն է ահով իր կենտ աչքը չռել
Ու լիզում է ափը անձուկ խեղդված ծովին:



Ամբողջովին ճերմակ է քաղաքս վերևից,
Իսկ ամպերից նայելիս այն նույնիսկ չկա:
Սառույցներ են կախվել այն լուսանցիկ թելերից,
Որ կապում են երգերս ժպիտից մի աղջկա:

Ես առնում եմ ձեռքս ասեղը լուսաթաթախ
Եվ այս պուճուր քաղաքին մեծ երազներս կարում.
Վերջին անցորդների հետ գլորվելով դանդաղ՝
Սառած փողոցներին նրան եմ նկարում:

Նկարում եմ ճերմակ տանիքներին,
Սառած շատրվանների լռության մեջ
Եվ այն մուրացիկի ծուռ հետքերին,
Որ ճերմակի ցուրտն է քրֆում անվերջ:

Բայց երբ ելնեն մարդիկ իրենց տնակներից
Ու վազվզեն տարտամ ցանկով անելիքի,
Թավալգլոր կգա քաղաքս հոգսերից
Ու երագիս շունչն էլի չի հերիքի:

Ուրվագիծը դեմքի, որ կիսատ էր մնացել
Նախորդ գիշերների անքուն հորինումից,
Կրունկի տակ ցեխոտ անցուդարձի
Կկոխկրտվի նորից...

Քաղաքն իմ վերևից ամբողջովին ճերմակ է,
Իսկ ամպերից նայելիս այն նույնիսկ չկա:
Էլի այս քաղաքում ես արևի պես մենակ եմ.
Քամին ավելց վերջին հետքերը աղջկա:

Անցագետ



Եվ գնդակն այն, որ ինձ այս գիշեր կգտնի,
Մահն ինչու՞ խնայի ինձանից, ու՞մ համար,
Այն նիշը, որ հիմա ավիս մեջ կքրտնի,
Ես հետս կտանեմ տիեզերքին համր:



Ու՞մ գիշերում, ու՞մ երազի մեջ խրտնած,
Ու՞մ աչքերում, ու՞մ հայացքի մեջ մոթնած,
Ու՞մ տողատակ, կամ ում հիվանդ մտքի մեջ
Կյանքս մնաց, կյանքս՝ գրքի պատռած էջ:

Հրաժեշտ տղերքին

Մեր միավոր ճամփեն կմանրվի մի օր.
Իսաչմերուկից այն կողմ կաճաններ մենակյացի.
Կաճաններն այդ վայրի մեզ կտանեն հեռու՝
Մեզ՝ ասպետաց տնագ, մատնելով սև հացին:

Էլ դու չկաս, խելա՛ն, ես էլ արդեն չկամ.
Մեր երազը ջոկ-ջոկ տարան հոգեհացի,
Ախ, մենուօթյան այս նոր հեռուներում չկամ
Կենտ գավի հետ գոնե երգս հետդ լացի:

Հարբամած

Քո գինին քիչ է, իմ օղին՝ շատ,
Դու մեղմ ժպտում ես, որ ավելի հարբեմ:
Գիշերը սառն է, արյունս՝ տաք,
Քո ի՞նչն է իմը – դու իմը չես:

Գիշերը տաք է, արյունս՝ պաղ,
Օտար շուրջպար է քեզ պարածում,
Ինչ դավ ու թայն կար մեջս անթաղ
Գլուխս ուտելու առիթը չի թողնում:

Դու քո պարը ունես, ես՝ ինձ ու ինձ,
Դու իմ ինչի՞ն ես պետք՝ մի ոտքս անդին է,
Ես ծառի տակ կիջնեմ իմ երկնքից
Ու կքնեմ հարբած – մնացյալը սին է:



Բարև, հուշ իմ հարբած, գիժ ու ցնորամիտ,
էս որտեղի՞ց եկար էս ուշ ժամին.

Մատիդ խաչ էիր արե՞լ, այ միամիտ,

Որ չուշանաս մեր այս թաքուն հոգեհացին:

Ես թերթեցի գրքիս վերջին էջը ճերմակ

Եվ ուզում եմ, որ այն մնա մաքուր,

Որ ապրածիս վրա լինի ինչպես վերմակ,

Ու չապրածիս մասին շվշվացնի տաքուկ:

Նրանց համար, ով ինձ մթին չի տա երբեք,

Ում սրտում միշտ երգ կա ցանցառ էս պոետից.

Դուք երգերիս գինով մի լավ հարբեք,

Եվ ոռնացեք մի լավ իմ կարոտից:

Սուլոցներով բռի, արցունքաբույր դողով

Երգի ինձնից ցանցառ ու շաշ ընկերներիս -

Ում անթրաշ դեմքը պոռոտիի զոռով

Քարաքոսի նման պատել է երգերիս:

Թող անթեղված սրտիս մոխիրը հանի վեր,

Ու մութ ծակուծուկից սիրածներիս թեղի,

Սիրածներս, որ դարձել են անվավեր,

Բայց գրվում են դեռ իզուր ու անտեղի:

Թող որ վերջին էջս նրանցից էլ պատմի՝
Նրանք, որ խաղացին իմ միակի դերը,
Մեկ-մեկ անկեղծորեն, մեկ-մեկ խաղով կատվի
Ճանկոռտեցին անվերջ իմ ամպեղեն երգերը:

Բարև, հուշ իմ հարբած, խենթ ու ցնորամիտ,
Էս որտեղի՞ց բուսնեցիր էս ուշ ժամին.
Մատիդ խա՛չ էիր արել, ա՛յ միամիտ,
Որ հասցնես վերջին էջիս գերեզմանին:



Նոր գարունի թիթեռները դեռ չէին ծնվել.
խաչասարդը հյուսեց իր վերջին սարդոստայնն ու
սպասեց միայնակ մինչև գիշեր:

«ՎԵՐՋԻՑ ՀԵՏՈՒ, ՍԿՂԲԻՑ ԱՌԱՋ»



Ես երգեցի իմ գարունը,
ապրեցի իմ ամառը,
հասա իմ աշունը,
դիմացա իմ ձմռանն ու
օրհնում եմ փետրվարը
իմ վերջից հետո և քո սկզբից առաջ:



Պտտվեց նորից իմ ծակ գլուխը
պռատ հնչյուններից դեռ չծնված երգի,
և ամպերի պատրանք բեմեզրի ծուխը
նոր հեքիաթով հիմա հները կհերքի:

Ժպտում է նորից, տես, լացող ծաղրածուն.
Ժպիտի չափ ձգձգում թիթեռի կյանքը.
դե ապրիր ժամն այդ անտերությանը լեցուն,
քանի դեռ արբած է սիրով տառապանքը:

Ախ, այս թաքուն, ծպտյալ, չվերծանված-կարծր
հարցերը, որ լռում են մեր օրերի տակ,
դև, հրեշտակ, թեկուզ՝ ավելի բարձր -
ամենին կպատի սիրո անձրևը տաք:

Լույս ու մութ չի լինելու իմ սրբունքին, գիտեմ,
ամեն ինչ դառնալու է չգոյության ծուխ:
Ես ուզում եմ նորից նախատերգով արբել.
ախ, պտտվիր էլի՝ իմ ծակ գլուխ:

Ծեր ծառը

Ծեր ծառը ծմեռում է
Մերկ ժայռի վրա,
Բայց քնքշանքը կանաչում է
Կոշտ խլերից նրա:

Ժայռի ճաքում չկա ոչ մի
Ջերմաբեր լույս,
Բայց նա պիտի կյանքից կառչի՝
Թեկուզ անհույս:

Ինքը ոչինչ - ապրել է կյանքն իր
Լերկ ժայռի ուսին.
Իր ընկերը քամին էր բիրտ
Ու մի կիսատ լուսին:

Բայց ծեր ծառի սիրտը ջլոտ
Տրոփում է անհուն,
Ճյուղերի մեջ փայփայելով
Մի թռչնաբույն:

Ամեն գարուն կանաչում է
Եվ շուքով լցվում.
Երգով ծառին փաղաքշում է
Մի պուճուր թռչուն:

Մի օր ծառը չորանա թե,
Կգա թռչունն էլի
Ու կսկսի նոր երգ հյուսել
Չոր ճյուղերին:



Մերս հաց է թխում. գոլորշին տաք է
Գոլորշին ունի հեթանոս բույր -
Աջ այտիս կարծես դեռ այրող մի ապտակ է
Ու վրան արցունքոտ մի համբույր:

Դեռ ինչքան գարուններ ճյուղերիս կերգեն
Ու ինչքան աշուններ կդեղնեն էջերիս.
Վայրիվեր իմ ճամփին ամեն ինչ կհերքեն,
Բայց անունդ ինձ հետ կլինի հանգչելիս:

Ես արդեն կշտացա մեծ մարդու իմ դերից.
Մանկանալ են ուզում չափչփված ծեր մտքերս...
Այդ քո հացն է կյանքի հետ դեռ հաշտ պահում ինձ
Ու ես աշխարհում կմրսեմ առանց քեզ:

Կոնդագրություն

Իմ հրնգեր – մենամաճ շրջմովիկ,
Ես ու դու նույն ճամփով ենք գնում,
Նույն բախտը գլորում անտանիք,
Աներազ նույն քնով ենք քնում:

Էս գիշեր գրոշներ մեզ պետք չեն,
Լուսինն իր արծաթն է տալու,
Երբ բոլոր լույսերը հանգչեն,
Ես թաքուն քեզ այցի եմ գալու:

Թե չունես խմելիք դու՝ հոգ չէ,
Այս գիշեր կհարբենք երազով,
Երբ բոլոր աստղերը հանգչեն,
Մենք բախտին կտանենք գրազով:

Բախտի հետ կխաղանք իր իսկ խաղն ու
Կթողնենք փողոցում այդ խեղճին,
Երկուսս էլ երկու ոտքից կաղ ենք,
Երկուսս էլ առաջին ու վերջին:

Երկուսս էլ անթև թռչուններ ենք,
Մեր երկինքն աչքերն են մարդկային,
Բայց անթև ինչքան էլ որ թռչում ենք՝
Չենք հասնում մեր փնտրած աչքերին:



Իմ ընդվզումի արձագանքների արձագանքը
համակերպումի ծանծաղ հևքով
թափթփված ու կեղտոտ անտունի կդառնա
փոշեգույն քաղաքի մուգ որջերում:

Ես կսկսեմ մամռոտել ու ծերանալ,
գուցե կսկսեմ հասկանալ ավելի շատ
ու ավելի քիչ խոսել իր հետ...

Նա անպատասխան կթողնի իմ անտարբերությունը,
ու մենք կսկսենք մեռնել իրար մեջ՝
առանց այդ մահը կարևորելու դերասանության:

Իմ հարցադրումների արձագանքների արձագանքը
Անդրադարձել է անեզրության խորախորհուրդ լուսությունից.
այնտեղից, ուր ապրում է մեծ մենությունը,
մինչ ես խոով եմ ինձանից...

Խաղաղությունս հեռու է դեռ մի լուսատարի:



Այս օրն էլ խառնվեց թաց օրերի հոգնախոիվ հոտին
Ու մարեց իր ձևերը մշուշներում հոգնած,
Գիշերը միայնակ շան պես ուղեկցեց երկար այն անցորդին,
Որը եկավ դեռ չբացված օրից ու երեկը գնաց:



Վերջին էջը մաքուր է պետք թողնել,
Ինչպես վերջին մարդուն անուն դնել պետք չէ.
Հողանալու կարիք զգում է ինքը հողն էլ,
Այս գիշերվա աստղերն էլ շատ վաղուց են հանգել:



Ես արդեն լացել եմ ոճիրներն ապագա
Ու թաղել եմ վաղվա մեռելներին բոլոր.
Հետմահու մոռացման մամուռներ փափագած
Իմ հոգին ընկնում է արևից գլխիկոր:



Իմ թալանված սրտին փաթաթված է նա դեռ՝
Ուղեկիցը անխոնջ միայնության ճամփիս,
Իմ կիսավեր բախտի աստվածուհին անձեռ
Ու փարոսը անմար վաղուց լքված ափիս:



Իմ ամեն երգի հետ
նույնանում են սիրածներս նախկին,
իմ ամեն երգի հետ
ես հանգչում եմ մի քիչ,
իմ ամեն երգի մեջ կարոտում եմ մեկին՝
դարդ ու ցավս քեզ բարդելով, գրի՛չ:

Իմ ամեն երգի հետ
ես մի քիչ էլ դառնում եմ թռչուն,
ու ամեն երգիս հետ
մոտենում է երկինքը հեռու:

Իմ ամեն երգի հետ դառնում եմ լռակյաց
անբարիշտ աշխարհից խռովում եմ մի քիչ,
իմ ամեն երգի մեջ մի քիչ կյանք է պահած,
մի քիչ էլ դեռ արև չդարձած ոչինչ:



Ես հեքիաթներ գիտեմ հնարոտ ու բարի՝
Խիզախ ասպետների, հավերժական սիրո:
Երբ խեցուղ մեջ լռի աղմուկը աշխարհի
Եվ իմ հեքիաթներին հավատաս իրոք՝
Քեզ կպատմեմ դրանք, որ չմոռես, սեր իմ.
Հեքիաթներս ունեն հրեղեն ծալքեր,
Ինչու դառնալ այս բույս եղելության գերին՝
Եվ չափագրել մռայլ ու մահաշունչ հանգեր:

Մենք չենք մնա, սեր իմ, այս ծմռանը գերի՝
Հիմա ես գարունի կանխազգում եմ համակ.
Խոստանում եմ, էլ ոչ մի լացկան տող չեմ գրի
Արի նստիր իմ նավն ու հեքիաթս գնանք...

... Տաք նինջն արդեն թառել է աչքերիդ
Ծածկելով դյութերս կոպերիդ տակ:

Ես դուրս կգամ փողոց ու քիչ կթափառեմ.
Կլռեմ փողոցի հետ մի քիչ էլ քո մասին,
Իսկ ամպերից վերև աստղերը կփայլեն
Ու կլինի հաստատ նորալուսին:

Մերկ բարդու սառած մատներին
Գոլորշի են փչում երկու ագռավ -
Հավատա, իմ տաք հեքիաթներից
Այս գարունը եկավ:



Հիմա իմ մեջ այն ծով դնջությունն է ննջում,

Որով վար է արել եզը պապիս.

Նրա նման հիմա փսլնքոտ են երգերս,

Նրա նման հիմա միամիտ է հոգիս:

Աղոթք

Թույլ տուր գոնե մի պահ ճաշակել սրբագործումդ -
Մրմունջն արքայությանդ լսելի դարձրու ինձ,
Այն ինչ դեռ չի մեռել ու չի թաղվել դեռ ծոցումդ՝
Կենսա-աղերսներով ծլում է իմ միջից:

Ես երկունքի ցավով դուրս կարծնեմ նորից
Բետոնե քաղաքի ցնորքներից անհուշ,
Պուպուշ գովազդներով ծախված երազներից
Ու փեղկերին մեռնող տիկնիկներից պուպուշ:

Երկնքից նոր պոկված ձյանն անունդ կհարցնեմ
Ով էլ որ դու լինես – ջուրն է խմիչքը սուրբ,
Միլիոներորդ ծնունդս ես նրանով կօրհնեմ,
Նոր թռիչք կսկսեմ նորածնի մաշկով նուրբ:

Հեռվում դողդողացող գյուղակի լույսերով,
Խոնավ հոտի մոտ քնած գամփռներով,
Նոր ճախրանքի սպասող ձվի ճաքերով,
Անհունի մշուշներում ննջացող անտառներով,
Հունձքի համար սրված լուսնե մանգաղով,
Ու անհայտի փոշում հողացած մեռելներով,
Ես կդառնամ լրիվ, ամբողջական, ամբողջ:

Անդրշիրիմյան երգ

Ես աշխարհում այսուհետև
պիտի քայլեմ ոտաբոբիկ,
Ես դեռ պիտի ծլարձակեմ
ու արմատներ ձգեմ հողում,
Ես դեռ պիտի ապրեմ
իմ այս վերջից հետո նաև,
իմ գոյության սեր-սերմերին
նախերգելով լուսարբունքը:

Ես աշխարհում այսուհետև
պիտի քայլեմ ոտաբոբիկ.
հողը երբ ինձ հիշի – ես կծլեմ:

Աղավնիները՝ կտուրի վրա

Գիրը բաց և մերկ էություն է. պարզորոշ տեսանելի ու շոշափելի է անշղարշ մարմնի թերություններն ու գեղեցկությունը: Բառի արվեստն այն մինուճարներից է, որի կրկնակը ծննդյան վկայական չի ունենում: Բնական ու անկեղծ կրքի մարմնավորում է. միաձին: Անշփոթելի: Միշտ էլ պատկառանք են ունեցել գրի մարդու նկատմամբ, քանի որ նրանք ծնվում են Աստծո մատնահետքը ճակատների:

Այդ մատնահետքով է ներկայանում նաև 21-ամյա բանաստեղծ Կարեն Անտաշյանը:

Կարենի բանաստեղծությունն առանձնանում է ինչ-որ տեղ արտաքուստ չենթարկվող, դեռևս անսովոր բառաշերտով ու լեզվական մտածողությամբ: Առտնին լեզու է, կենդանի, դուրս է գրքային սահմանումներից: Պարականոն է, շղարշված խոսակցական ու առօրյա բառարանի, դեռևս անգիր մտածողության ու լեզվաշերտի թափանցիկ անմիջականությամբ: Այդ բառաշարը, որ հոլովվում է ամեն օր ու բանավոր, իրերին նորից ու նոր նայելու առօրյա անմիջական հայացք է, գրավոր մտածողության շերտեր թափանցեց վերջին 10-15 տարում թույլ չտալով, որ ծերությունից հոգնի գրական լեզուն: Ինչպիսի խաղացկունություն, իրեղեն ու հոգևոր դրսևորում ունի ժամանակը, այնպես էլ մտածողությունն է ուրվագծվում, դիմավորվում բառի, տողի, պատկերի մարմնավորումով ու

շոշափելիությանը: Իրերի փոխակերպումն է առաջացնում մտածողության մակընթացություն, որոնց զուգասերումն էլ գոյավորում է ժամանակ, իսկ ժամանակը լեզուն է՝ մշտաճող, պատանի, դեռահաս...

Դեռևս զգալի է անփորձ ձեռքի վրիպումներն ու «շոշալությունը»: Երբեմն էլ տողը կաղում է՝ սայթաքելով բանաստեղծական հողին: Մի քիչ հեռու է հասուն տարիքի «ժլատությունը»: Այդուհանդերձ, Կարեն Անտաշյանն ակնհայտորեն օժտված է և սկսվում է բնական ու մաքուր ակունքից. բանաստեղծությունն ունի աճելու տեղ և կարողություն: Շոշափելի է մուսաների թափանցիկ գիշերազգեստը:

Առաջին գիրքը հեղինակի աղապատանքն է: Այդ նրբակերտ ու առաջին սիրով է Կարենը ներկայանում ընթերցողին:

Բարի լինի մուտքդ մեծ երթ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ԼՈՒՍԱՐԲՈՒՆՔ»

1. Այս գարունն ունի...
2. Ես եկել եմ արդեն...
3. Երազախաբություն
4. Քո աչքերն ունեն գիշերվա գույն...
5. Իմ քաղաքը
6. Էս գարունով հղի քամին...
7. Եթե դեռ քնքուշ են իմ երգերը...
8. Շունչ
9. Ու ես կգամ...
10. Վայր ընկած դեռևս արոփող սիրտ...

«ԹԻԹԵՌՆԱԿԻ ԵՐԱԶԱՀԱՆ»

1. Ես բառեր գիտեմ...
2. Լսի՛ր, ո՞նց ես էդպես...
3. Գիշերվա քնադ հոնքերով...
4. Չար հեքիաթ
5. Լացկան ուրվականների քաղաքը...
6. Իմ սուրն ու քո մուրը
7. Ես ուրիշի երագից էի...
8. Արարում
9. Սուրբ ծննդյան անցուդարձ

10. Դու էլ չես գա...
11. Ես հիշում եմ փողոցը...
12. Ոսկե ծվի պես լուսինը ճաքեց...
13. Անմնացորդ

«ԳԻՐՔ ԱՇԵԿԱՆ»

1. Նա, ով կորցնելու ոչինչ չունի...
2. Ոչինչ չարժեն հիմա...
3. Գիշերն ավելի է երկարել...
4. Առօրեականություն...
5. Գիշերն այնպես թաքուն...
6. Լցրե՛ք փղերք...
7. Յուրփ է հիմա ու մութ...
8. Գիշերը կտևի մինչ լուսաբաց...
9. Ցավագրկում
10. Խեղկատակի թաքունը
11. Այս գարունն իմ կարոտն էր...
12. Էջանիշ երկփողեր

«ՁՄԵՌՆԱՄՈՒԹ»

1. Արևն ընկնում է ամեն փերևի հետք...
2. Եվ այսպես, ամեն ինչ ավարտվեց...
3. Զուլոյապատում
4. Ամբողջովին ճերմակ է քաղաքս...
5. Անցագետ

6. Հրաժեշտը տղերքին
7. Հարբամած
8. Բարև, հուշ իմ հարբած...
9. Նոր գարունի թիթեռները...

«ՎԵՐՋԻՑ ՀԵՏՈՒ, ՍԿԶԲԻՑ ԱՌԱՋ»

1. Պարզվեց նորից իմ ծակ գլուխը...
2. Ծեր ծառը
3. Մերս հաց է թխում...
4. Կոնդազրություն
5. Իմ ընդվզումի...
6. Այս օրն էլ խառնվեց...
7. Իմ ամեն երգի հետք...
8. Ես հեքիաթներ գիտեմ...
9. Հիմա իմ մեջ այն խուլ...
10. Աղոթք

Անդրշիրիմյան երգ

Հուսիկ Արա, Աղավնիները՝ կտուրի վրա



Կարեն Անտաշյան

(ծնվ. 1983թ. Վանաձոր)

ԷԼ-ԹՈՂԱՐԿՈՄ
ԵՐԵՎԱՆ 2012

ISBN 99941-34-69-8